ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

-241-
13 .09.2021 թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
Պ-Ն՝Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Խաչատրյան,

Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Լոռու մարզի Գոգարան համայնքի ավագանու թիվ 21 , 22-Ա, 23 , 24-Ա,25 որոշումները :
Առդիր՝ 10 էջ :

ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԳԱԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Լոռու մարզի Գոգարան համայնք,
հասցե գ.Գոգարան 1 փ. 31/1

հեռ՝. 0255 6 06 04
էլ.փոստ՝ gogaran.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 21

« 09 » Սեպտեմբերի 2021 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 09-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Գոգարան համայնքի ավագանին

որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գոգարան համայնքի ավագանու 2021թ. սեպտեմբերի 09-ի հերթական նիստի օրակարգը.

1.ՀՀ Լոռու մարզի Գոգարան համայնքի ավագանու 2021 թ. սեպտեմբերի 09-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին :
2.ՀՀ Լոռու մարզի Գոգարան համայնքում արխիվային գործի վարման կարգ հաստատելու մասին:
3. ՀՀ Լոռու մարզի Գոգարան համայնքում տեղական տուրք և վճար վճարողների գրանցամատյանները վարելու կարգը հաստատելու մասին:

4.Գոգարան համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին :

5.Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողամասերից վարձակալության տրամադրելու համաձայնություն տալու մասին:

Համայնքի ավագանու անդամներ	կողմ	դեմ	ձեռնպահ
ԳԱԼՈՅԱՆ ԳԱՐԻԿ			
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ			
ՀԱԼԱՋՅԱՆ ԵՂԻՇԵ			
ՄԱՐՈՒՔՅԱՆ ԿԱՐԵՆ			

ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ԱՐԹՈՒՐ ԳԱԼՈՅԱՆ
(ստորագրություն) (Անուն,ազգանուն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Լոռու մարզի Գոգարան համայնք,
հասցե գ. Գոգարան 1փ , 2 31/1

«09» սեպտեմբերի 2021 թվականի

ՈՐՈՇՈՒՄ 22-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՐԽԻՎԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Արխիվային գործի մասին,, ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով, ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է .

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Գոգարան համայնքում արխիվային գործի վարման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. 2021թ-ի դրությամբ ժամանակավոր պահպանության ժամկետը լրացած համայնքային սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը փոխանցել պետական սեփականության՝ մշտական պահպանության:

3. Համայնքի ղեկավարին՝ հետագայում պահպանել սույն կարգով սահմանված ժամկետում համայնքային սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքի փոխանցումը պետական սեփականության:

Ավագանու անդամներ	կողմ	դեմ	ձեռնպահ
Գալոյան Գարիկ			
Գասպարյան Լևոն			
Հալաջյան Եղիշե			
Մարուքյան Կարեն			

ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԱԼՈՅԱՆ

Հավելված
Գոգարան համայնքի ավագանու
2021թ-ի սեպտեմբերի 09 -ի թիվ 22-Ա որոշման

ԿԱՐԳ

ԱՐԽԻՎԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում է Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի և արխիվային այլ փաստաթղթերի (անկախ դրանց նկատմամբ սեփականության իրավունքից) համալրման, հաշվառման, պահպանության, օգտագործման, ինչպես նաև արխիվային գործի հետ առնչվող իրավահարաբերությունները:

2. Համայնքի ավագանին՝

1) որոշում է կայացնում համայնքային արխիվի ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին.

2) որոշում է համայնքային սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքի փոխանցումը պետական սեփականության:

3. Համայնքի ղեկավարը՝

1) ներկայացնում է ավագանու հաստատմանը համայնքային արխիվ ստեղծելու, վերակազմակերպելու կամ լուծարելու մասին որոշման նախագիծը.

2) ապահովում է համայնքային արխիվի, համայնքային այլ կազմակերպությունների արխիվային փաստաթղթերի համալրումը, հաշվառումը, պահպանությունը և օգտագործումը:

3) կազմակերպում է համայնքի արխիվային գործի վարումը.

4. Համայնքի աշխատակազմը՝

1) ապահովում է համայնքի արխիվային գործի վարումը.

5. Համայնքային արխիվների ֆինանսական ու նյութատեխնիկական ապահովումն իրականացվում է համայնքային բյուջեների միջոցների հաշվին:

6. Տեղական ինքնակառավարման մարմինները և նրանց ենթակայության տակ գտնվող կազմակերպությունները, իրենց գործունեության ընթացքում առաջացած արխիվային փաստաթղթերի համալրման, հաշվառման, պահպանության և օգտագործման նպատակով մինչև պետական կամ համայնքային արխիվ մշտական պահպանության հանձնելը կամ օրենսդրությամբ սահմանված կարգով ոչնչացնելը պարտավոր են ստեղծել արխիվ:

7. Համայնքի սեփականություն են՝

1) տեղական ինքնակառավարման մարմինների, համայնքային կազմակերպությունների արխիվային փաստաթղթերը.

2) իրավաբանական և ֆիզիկական անձանց՝ համայնքին որպես սեփականություն հանձնած արխիվային փաստաթղթերը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

8. Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի համայնքի սեփականություն համարվող փաստաթղթերի պահպանությունն իրականացվում է հետևյալ կերպ.

1) մշտական պահպանություն՝ պետական կամ առկայության դեպքում համայնքային արխիվներում:

2) ժամանակավոր պահպանություն՝ տեղական ինքնակառավարման մարմիններում, համայնքային կազմակերպություններում՝ սույն օրենքով սահմանված ժամկետների ընթացքում:

9. Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի՝ համայնքի սեփականություն համարվող փաստաթղթերի ժամանակավոր պահպանության ժամկետները լրանալուց հետո կարգավորված, տեղեկատու-որոնողական միջոցների հետ մշտական պահպանության են հանձնվում պետական կամ առկայության դեպքում համայնքային արխիվներ:

10. Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի փաստաթղթերը ժամանակավոր (մինչև պետական կամ համայնքային արխիվներ մշտական պահպանության հանձնելը) պահպանելու առավելագույն ժամկետ տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքային կազմակերպությունների փաստաթղթերի համար սահմանվում է 5 տարի.

11. Տեղական ինքնակառավարման մարմինները և համայնքային կազմակերպություններն ապահովում են Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի կազմում ընդգրկված փաստաթղթերի կարգավորումը, նախապատրաստումը և պետական կամ համայնքային արխիվներ մշտական պահպանության հանձնումը:

12. Տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքային կազմակերպությունների լուծարման դեպքում Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի կազմում ընդգրկված փաստաթղթերը (ներառյալ՝ մինչև 2013 թվականի հունվարի 1-ը անձնակազմին վերաբերող) հանձնվում են պետական կամ համայնքային արխիվներ:

13. Համայնքային կազմակերպությունների մասնավորեցման (սեփականաշնորհման) դեպքում Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի կազմում ընդգրկված փաստաթղթերը (ներառյալ՝ մինչև 2010 թվականի հունվարի 1-ը անձնակազմին վերաբերող) հանձնվում են պետական կամ համայնքային արխիվներ:

14. Համայնքային կազմակերպությունների լուծարման դեպքում լուծարային հանձնաժողովը կազմակերպում է լուծարվող կազմակերպության մինչև 2010 թվականի հունվարի 1-ը գործունեությամբ առաջացած անձնակազմին վերաբերող փաստաթղթերի առանձնացումը և հանձնումը պետական կամ համայնքային արխիվ:

ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԱԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Լոռու մարզի Գոգարան համայնք,
հասցե գ Գոգարան 1փ , շ31/1

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 23

09 սեպտեմբերի 2021 թվականի

ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ԵՎ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐԸ ՎԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ‹‹Տեղական տուրքերի և վճարների մասին›› Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ տեղական տուրք և վճար վճարողների գրանցամատյանները վարել փաստաթղթային եղանակով:
2. Հաստատել՝ Լոռու մարզի Գոգարան համայնքի
   ա.տեղական տուրք վճարողների գրանցամատյանի ձև՝ համաձայն թիվ 1 հավելվածի
   բ.տեղական վճար վճարողների գրանցամատյանի ձև՝ համաձայն թիվ 2 հավելվածի
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ	կողմ	դեմ	ձեռնպահ
Գալոյան Գարիկ			
Գասպարյան Լևոն			
Հալաջյան Եղիշե			
Մարուքյան Կարեն			

ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԱԼՈՅԱՆ

Հավելված թիվ 1
ՀՀ Լոռու մարզի Գոգարան համայնքի
09.09.2021 թվականի թիվ 23-Ա որոշման

Ձև N 1

ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

Տեղական տուրք վճարողների

Հ/Հ	վճարողի			Տեղական տուրքի տեսակը	Հայտի ներկայացման ամսաթիվ	Տուրքի վճարման		Համայնքի ղեկավարի որոշման		թույլտվություն		
	Անուն ազգանուն /իրավաբանական անձի անվանում	ՀՎՀՀ/անձը հաստատող փաստաթղթի համատ	Գործունեության իրականացման վայրի հասցեն			ամսաթիվ	Գումար (դրամ)	համարը	ամսաթիվ	համարը	ամսաթիվ	Ժամանակահատվածը որի համար տրամադրվել

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԳԱԼՈՅԱՆ

Հավելված թիվ 1
ՀՀ Լոռու մարզի Գոգարան համայնքի
09.09.2021 թվականի թիվ 23-Ա որոշման

Ձև N 2

ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

Տեղական վճար վճարողների

	վճարողի			Տեղական վճարի տեսակը	Պայմանագրի / որոշման		վճարման	
Հ/Հ	Անուն, ազգանունը /իրավաբանական անձի անվանումը	ՀՎՀՀ/ անձը հաստատող փաստաթղթի համարը	Գործունեության իրականացման վայրի հասցեն		համարը	ամսաթիվ	ամսաթիվ	Գումար (ՀՀ դրամ)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԱԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Գոգարան համայնք, հասցե գ Գոգարան,
հեռ.0255 6 06 04 էլ. փոստ՝ gogaran.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 09 » Սեպտեմբերի 2021 թվական, 24–Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 31 -ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գոգարան համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 08-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Գոգարան համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ՝	Կողմ՝	Դեմ՝	Ձեռնպահ՝
ԳԱԼՈՅԱՆ ԳԱՐԻԿ			
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ			
ՀԱԼԱՋՅԱՆ ԵՂԻՇԵ			
ՄԱՐՈՒՔՅԱՆ ԿԱՐԵՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ԱՐԹՈՒՐ ԳԱԼՈՅԱՆ

Կ.Տ (ստորագրություն) (Անուն, ազգանուն)

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Գոգարան համայնքի ավագանու
2021 թվականի Սեպտեմբերի 9 -ի N 24 -Ա որոշման

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈԳԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1.Մխոյան Գոհարինե Սերյոժայի– 30.0 հազար դրամ / սոց. օգնություն /
2.Այվազյան Թերեզա Արտավազդի – 20.0 հազար / սոց. օգնություն /
3.Այվազյան Մարիամ Սասունի– 15.0 հազար դրամ / սոց. օգնություն /
4.Ափինյան Էլմիրա Վարդանի- 15.0 հազար դրամ / սոց. օգնություն /
5.Անտոնյան Ավետիք Անաստասի- 20.0 հազար դրամ / սոց. օգնություն /
6.Սաֆարյան Դուխիկ Սերուժանի-10.0 հազար դրամ / նորած. երեխայի գումար /
7.Այվազյան Մանուշակ Մյասնիկի-10.0 հազար դրամ /նորած. երեխայի գումար /
8.Խեչոյան Տաթևիկ Համլետի 10.0 հազար դրամ /նորած. երեխայի գումար /
9.Անտոնյան Համլետ Գագիկի- 50.0 հազար դրամ /ուսման վարձի գումար /

Գոգարան համայնքի ղեկավար՝ ---------- Արթուր Գալոյան
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Լոռու մարզի Գոգարան համայնք,
հասցե գ. Գոգարան 1փ , շ 31/1

ՈՐՈՇՈՒՄ 25

«09» սեպտեմբերի 2021 թվականի

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՏԻՄ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 14.01.2010թ. «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց /մշտական/ օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 16-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ է

1. Տալ համաձայնություն համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողամասերից՝ 06-030-0151-0001 ծածկագրից 4,00004 հա, 4-րդ կարգի արոտավայր 10 տարի ժամկետով վարձակալությամբ տրամադրելուն:
2. Հողամասի տարեկան վարձավճարի գինը սահմանել 8000 ՀՀ դրամով, մրցույթի մասնակցության վճարը 1000 դրամ նախավճարը 4000 դրամ, քայլի չափը 400 դրամ։

Համայնքի ավագանի	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Գալոյան Գարիկ			
Գասպարյան Լևոն			
Հալաջյան Եղիշե			
Մարուքյան Կարեն			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳԱԼՈՅԱՆ